## *3. Պարենի առկայություն*

Աղյուսակ 3.1

*Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունները, բերքատվությունը և համախառն բերքը **

| | Տարածությունները (հազ. հա) | | | | | Բերքատվությունը (ց/հա)** | | | | | Համախառն բերքը (հազ.տոննա) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
| Ընդամենը տարածություն | 303.2 | 317.1 | 305.6 | 314.6 | 325.2 | x | x | x | x | x | x | x | x | x | x |
| *այդ թվում`* | | | | | | | | | | | | | | | |
| հացահատիկային մշակաբույսեր | 181.1 | 203.4 | 191.9 | 200.8 | 206.8 | 13.7 | 18.6 | 21.9 | 15.8 | 22.8 | 224.8 | 367.3 | 415.5 | 310.0 | 456.9 |
| որից` ցորեն | 114.5 | 110.6 | 120.1 | 127.9 | 128.7 | 16.7 | 22.3 | 23.9 | 17.2 | 23.4 | 177.8 | 241.7 | 284.7 | 216.7 | 291.6 |
| կարտոֆիլ | 34.2 | 31.8 | 30.5 | 32.3 | 35.7 | 87.3 | 114.6 | 122.8 | 157.2 | 161.5 | 290.3 | 363.8 | 374.3 | 507.5 | 576.4 |
| բանջարանոցային մշակաբույսեր | 20.0 | 19.8 | 20.2 | 23.1 | 22.3 | 189.1 | 224.2 | 232.3 | 245.7 | 266.3 | 375.7 | 456.0 | 466.0 | 569.4 | 600.8 |
| բոստանային մշակաբույսեր | 3.4 | 3.3 | 3.8 | 4.1 | 4.0 | 156.1 | 165.1 | 232.9 | 284.4 | 280.2 | 52.8 | 54.8 | 89.7 | 115.4 | 112.9 |
| պտուղ և հատապտուղ | 22.8 | 22.7 | 22.8 | 25.7 | 34.7 | 58.8 | 47.6 | 39.7 | 48.1 | 39.1 | 128.5 | 102.4 | 82.6 | 103.1 | 113.7 |
| խաղող | 15.0 | 14.8 | 13.0 | 13.0 | 14.9 | 78.0 | 81.4 | 82.8 | 71.4 | 108.9 | 115.8 | 116.5 | 104.0 | 81.6 | 148.9 |

** Այստեղ և հետայսու բերքատվությունը հաշվարկված է հավաքված տարածության նկատմամբ:

Աղյուսակ 3.2.

Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները, միջին բերքատվությունը և համախառն բերքը *

| | Ցանքատարածությունները (հա) | | | | | Բերքատվությունը (ց/հա)** | | | | | Համախառն բերքը (հազ.տոննա) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
| **ՀՀ ընդամենը** | **181069** | **203378** | **191867** | **200818** | **206767** | **13.7** | **18.6** | **21.9** | **15.8** | **22.8** | **224.8** | **367.3** | **415.5** | **310.0** | **456.9** |
| ք. Երևան | 351 | 351 | 360 | 358 | 375 | 37.0 | 34.8 | 23.9 | 30.2 | 30.7 | 1.3 | 1.2 | 0.9 | 1.1 | 1.2 |
| Արագածոտն | 20424 | 20162 | 19094 | 21791 | 22061 | 5.8 | 14.8 | 17.3 | 12.8 | 23.3 | 10.5 | 29.1 | 33.0 | 27.8 | 51.3 |
| Արարատ | 13728 | 13913 | 13038 | 11849 | 12497 | 32.4 | 28.3 | 30.8 | 31.0 | 36.1 | 44.5 | 39.4 | 40.2 | 36.7 | 45.1 |
| Արմավիր | 20114 | 20444 | 20619 | 18597 | 18728 | 32.1 | 35.1 | 36.4 | 31.2 | 33.0 | 64.6 | 71.8 | 74.9 | 58.0 | 61.0 |
| Գեղարքունիք | 36392 | 42706 | 33127 | 40842 | 43918 | 6.0 | 12.0 | 19.5 | 15.4 | 21.8 | 15.5 | 51.2 | 64.6 | 61.2 | 95.6 |
| Լոռի | 10889 | 14265 | 16269 | 14785 | 14740 | 10.9 | 25.8 | 18.0 | 11.2 | 18.6 | 11.4 | 36.7 | 28.8 | 15.4 | 25.0 |
| Կոտայք | 14676 | 14823 | 12850 | 14539 | 14900 | 7.0 | 10.7 | 13.3 | 8.7 | 18.3 | 10.2 | 15.8 | 17.1 | 12.6 | 27.1 |
| Շիրակ | 38119 | 42028 | 44173 | 43027 | 44399 | 10.2 | 19.5 | 21.8 | 10.2 | 20.8 | 36.9 | 80.9 | 93.6 | 42.1 | 82.1 |
| Սյունիք | 16011 | 22125 | 17885 | 20545 | 21121 | 11.9 | 9.8 | 18.9 | 14.8 | 20.2 | 18.9 | 18.7 | 33.9 | 30.5 | 42.7 |
| Վայոց ձոր | 3517 | 3439 | 3208 | 3135 | 3254 | 9.6 | 10.5 | 16.1 | 12.4 | 15.5 | 2.4 | 2.0 | 5.2 | 3.7 | 5.1 |
| Տավուշ | 6848 | 9122 | 11244 | 11350 | 10774 | 13.1 | 22.5 | 21.1 | 18.7 | 19.5 | 8.6 | 20.5 | 23.3 | 20.8 | 20.7 |

Աղյուսակ 3.3.

Ցորենի ցանքատարածությունները, միջին բերքատվությունը և համախառն բերքը *

| | Ցանքատարածությունները (հա) | | | | | Բերքատվությունը (ց/հա)** | | | | | Համախառն բերքը (հազ.տոննա) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
| **ՀՀ ընդամենը** | **114487** | **110629** | **120135** | **127897** | **128705** | **16.7** | **22.3** | **23.9** | **17.2** | **23.4** | **177.8** | **241.7** | **284.7** | **216.7** | **291.6** |
| ք. Երևան | 336 | 318 | 263 | 358 | 343 | 37.8 | 35.3 | 24.0 | 30.2 | 31.5 | 1.3 | 1.1 | 0.6 | 1.1 | 1.1 |
| Արագածոտն | 8096 | 6405 | 7669 | 9084 | 10211 | 7.9 | 15.9 | 20.8 | 15.6 | 22.6 | 5.6 | 10.1 | 15.9 | 14.1 | 23.1 |
| Արարատ | 13098 | 12798 | 12284 | 11157 | 11383 | 32.3 | 28.6 | 30.8 | 31.3 | 35.1 | 42.4 | 36.6 | 37.9 | 34.9 | 40 |
| Արմավիր | 19141 | 19728 | 18997 | 16990 | 17259 | 32.3 | 35.2 | 37.6 | 31.0 | 30.3 | 61.8 | 69.4 | 71.4 | 52.6 | 51.5 |
| Գեղարքունիք | 16264 | 12775 | 11940 | 18071 | 16060 | 7.3 | 12.8 | 19.9 | 17.1 | 22.3 | 8.6 | 16.4 | 23.7 | 30.8 | 35.8 |
| Լոռի | 7662 | 9574 | 12839 | 11735 | 12294 | 12.2 | 30.5 | 18.5 | 11.1 | 18.7 | 9.1 | 29.3 | 23.5 | 12.3 | 20.8 |
| Կոտայք | 10034 | 8634 | 8760 | 9765 | 10173 | 7.8 | 12.2 | 14.2 | 9.1 | 19.3 | 7.9 | 10.4 | 12.4 | 8.9 | 19.5 |
| Շիրակ | 22986 | 20597 | 24850 | 25528 | 26123 | 10.0 | 21.4 | 23.8 | 11.5 | 23.3 | 21.8 | 43.9 | 57.7 | 28.4 | 54.7 |
| Սյունիք | 10058 | 12644 | 12612 | 15318 | 15836 | 13.7 | 11.0 | 20.3 | 15.1 | 20.7 | 13.6 | 12.8 | 25.6 | 23.1 | 32.8 |
| Վայոց ձոր | 2993 | 2104 | 2738 | 2500 | 2500 | 9.9 | 9.9 | 17.0 | 12.7 | 15.5 | 2.0 | 1.4 | 4.7 | 3 | 3.9 |
| Տավուշ | 3819 | 5052 | 7183 | 7391 | 6523 | 9.7 | 20.6 | 16.1 | 10.4 | 13.0 | 3.7 | 10.3 | 11.3 | 7.5 | 8.4 |

Աղյուսակ 3.4.

Կարտոֆիլի ցանքատարածությունները, միջին բերքատվությունը և համախառն բերքը *

| | Ցանքատարածությունները (հա) | | | | | Բերքատվությունը (ց /հա)** | | | | | Համախառն բերքը (հազ.տոննա) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
| **ՀՀ ընդամենը** | **34202** | **31752** | **30485** | **32286** | **35734** | **87.3** | **114.6** | **122.8** | **157.2** | **161.5** | **290.3** | **363.8** | **374.3** | **507.5** | **576.4** |
| ք. Երևան | 114 | 109 | 106 | 104 | 83 | 117.5 | 172.5 | 162.8 | 148.2 | 132.5 | 2.0 | 1.9 | 1.7 | 1.5 | 1.1 |
| Արագածոտն | 2147 | 1963 | 1700 | 1850 | 1960 | 103.8 | 124.9 | 167.8 | 174.6 | 208.4 | 22.0 | 24.4 | 28.5 | 32.3 | 40.8 |
| Արարատ | 1091 | 904 | 981 | 955 | 910 | 187.0 | 213.1 | 238.5 | 249.2 | 279.0 | 20.4 | 19.3 | 23.4 | 23.8 | 25.4 |
| Արմավիր | 1522 | 1267 | 1559 | 1854 | 1822 | 191.0 | 186.0 | 280.4 | 231.3 | 313.2 | 29.1 | 23.6 | 43.7 | 42.9 | 57.1 |
| Գեղարքունիք | 9933 | 10484 | 11786 | 13050 | 15042 | 96.1 | 122.1 | 122.1 | 159.3 | 169.5 | 86.9 | 127.9 | 143.9 | 207.9 | 254.9 |
| Լոռի | 10017 | 8162 | 6434 | 6259 | 6966 | 65.4 | 98.1 | 73.5 | 119.8 | 80.0 | 65.3 | 80.0 | 47.3 | 75.0 | 55.4 |
| Կոտայք | 1461 | 1229 | 1121 | 1206 | 999 | 50.6 | 137.2 | 145.2 | 213.2 | 219.9 | 7.4 | 16.9 | 16.3 | 25.7 | 22.0 |
| Շիրակ | 2841 | 2528 | 1995 | 2452 | 3335 | 79.2 | 98.2 | 129.0 | 163.0 | 180.8 | 22.3 | 24.8 | 25.8 | 40.0 | 60.3 |
| Սյունիք | 1985 | 2041 | 1972 | 1986 | 1987 | 110.4 | 112.3 | 131.2 | 130.8 | 163.2 | 21.9 | 22.9 | 25.9 | 26.0 | 32.4 |
| Վայոց ձոր | 236 | 255 | 225 | 261 | 213 | 80.3 | 114.5 | 164.2 | 176.6 | 184.3 | 1.9 | 2.9 | 3.7 | 4.6 | 3.9 |
| Տավուշ | 2855 | 2810 | 2606 | 2309 | 2417 | 38.9 | 68.3 | 54.4 | 120.5 | 95.7 | 11.1 | 19.2 | 14.1 | 27.8 | 23.1 |

Աղյուսակ 3.5.

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները, միջին բերքատվությունը և համախառն բերքը *

| | Ցանքատարածությունները (հա) | | | | | Բերքատվությունը (ց/հա)** | | | | | Համախառն բերքը (հազ.տոննա) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
| **ՀՀ ընդամենը** | **20017** | **19839** | **20222** | **23132** | **22245** | **189.1** | **224.2** | **232.3** | **245.7** | **266.3** | **375.7** | **456.0** | **466.0** | **569.4** | **600.8** |
| ք. Երևան | 465 | 492 | 343 | 426 | 539 | 161.7 | 154.6 | 166.2 | 145.1 | 122.7 | 7.5 | 7.6 | 5.7 | 6.2 | 6.6 |
| Արագածոտն | 1178 | 1063 | 968 | 1174 | 1101 | 93.7 | 113.1 | 135.2 | 179.2 | 176.5 | 11.0 | 11.9 | 13.1 | 21.0 | 19.4 |
| Արարատ | 4225 | 4229 | 4773 | 6158 | 5661 | 281.1 | 318.6 | 319.9 | 358.4 | 363.8 | 118.8 | 134.7 | 152.6 | 221.4 | 206.5 |
| Արմավիր | 6206 | 6036 | 6331 | 7309 | 6917 | 254.0 | 276.9 | 282.6 | 260.8 | 327.5 | 157.6 | 178.6 | 178.9 | 192.8 | 238.5 |
| Գեղարքունիք | 1429 | 1280 | 1466 | 1498 | 1603 | 142.4 | 220.7 | 243.9 | 235.1 | 241.1 | 20.4 | 28.3 | 35.7 | 35.2 | 38.7 |
| Լոռի | 1292 | 1304 | 1329 | 1342 | 1271 | 76.9 | 124.7 | 90.9 | 164.4 | 123.3 | 9.5 | 16.3 | 12.1 | 21.1 | 14.7 |
| Կոտայք | 1612 | 1618 | 1561 | 1367 | 1356 | 114.0 | 165.7 | 178.1 | 158.4 | 181.4 | 18.4 | 26.8 | 26.6 | 21.6 | 24.6 |
| Շիրակ | 1251 | 1344 | 1113 | 1236 | 1399 | 112.3 | 215.9 | 164.0 | 181.8 | 189.5 | 13.1 | 28.9 | 18.3 | 22.3 | 25.7 |
| Սյունիք | 838 | 920 | 910 | 952 | 957 | 137.0 | 131.1 | 149.3 | 150.5 | 148.6 | 11.4 | 12.1 | 13.6 | 14.3 | 14.2 |
| Վայոց ձոր | 506 | 492 | 411 | 501 | 461 | 99.1 | 73.9 | 110.7 | 119.0 | 122.7 | 5.0 | 3.6 | 4.6 | 6.0 | 5.7 |
| Տավուշ | 1015 | 1061 | 1017 | 1169 | 980 | 29.8 | 67.8 | 51.7 | 64.1 | 65.7 | 3.0 | 7.2 | 4.8 | 7.5 | 6.2 |

Աղյուսակ 3.6.

Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները, միջին բերքատվությունը և համախառն բերքը *

| | Ցանքատարածությունները (հա) | | | | | Բերքատվությունը (ց/հա)** | | | | | Համախառն բերքը (հազ.տոննա) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
| **ՀՀ ընդամենը** | **3386** | **3333** | **3853** | **4058** | **4034** | **156.1** | **165.1** | **232.9** | **284.4** | **280.2** | **52.8** | **54.8** | **89.7** | **115.4** | **112.9** |
| ք. Երևան | 4 | 3 | 4 | 4 | 9 | 187.5 | 185.0 | 175.0 | 175.0 | 138.9 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| Արագածոտն | 109 | 116 | 81 | 187 | 144 | 40.2 | 34.2 | 53.2 | 88.6 | 100 | 0.4 | 0.3 | 0.4 | 1.7 | 1.5 |
| Արարատ | 488 | 542 | 842 | 792 | 900 | 188.2 | 178.5 | 234.7 | 331.1 | 313.2 | 9.2 | 9.7 | 19.7 | 26.2 | 28.2 |
| Արմավիր | 2696 | 2570 | 2811 | 2985 | 2887 | 158.8 | 172.4 | 243.2 | 289.1 | 284.8 | 42.8 | 44.3 | 68.4 | 86.3 | 82.2 |
| Գեղարքունիք | - | - | - | - | - | - | - | - | - | | - | - | - | - | - |
| Լոռի | 7 | 8 | 11 | 6 | 10 | 23.6 | 51.6 | 18.5 | 40.8 | 76.7 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Կոտայք | - | - | - | - | - | - | - | - | - | | - | - | - | - | -- |
| Շիրակ | - | 5 | - | - | - | - | 102.0 | - | - | | - | 0.1 | - | - | |
| Սյունիք | 3 | 3 | 8 | 2 | 1 | 79.3 | 112.0 | 194.4 | 150.0 | 238.0 | 0.0 | 0.0 | 0.2 | 0.0 | 0.0 |
| Վայոց ձոր | 33 | 30 | 28 | 28 | 15 | 48.5 | 31.3 | 104.5 | 118.6 | 87.3 | 0.2 | 0.1 | 0.3 | 0.3 | 0.2 |
| Տավուշ | 46 | 56 | 68 | 54 | 68 | 30.5 | 37.0 | 94.8 | 145.5 | 108.2 | 0.1 | 0.2 | 0.6 | 0.8 | 0.7 |

Աղյուսակ 3.7.

Պտղի և հատապտղի տարածությունները, միջին բերքատվությունը և համախառն բերքը *

| | Տարածությունները (հա) | | | | | Բերքատվությունը (ց/հա)** | | | | | Համախառն բերքը (հազ.տոննա) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
| **ՀՀ ընդամենը** | **22796** | **22656** | **22839** | **25735** | **34725** | **58.8** | **47.6** | **39.7** | **48.1** | **39.1** | **128.5** | **102.4** | **82.6** | **103.1** | **113.7** |
| ք. Երևան | 890 | 890 | 766 | 839 | 1297 | 33.7 | 19.8 | 12.9 | 28.0 | 6.0 | 2.9 | 1.7 | 1.0 | 2.3 | 0.7 |
| Արագածոտն | 3444 | 3467 | 3013 | 3301 | 5095 | 46.5 | 69.2 | 55.2 | 91.5 | 87.6 | 16.0 | 24.0 | 16.6 | 28.4 | 40.3 |
| Արարատ | 3715 | 3777 | 3773 | 5031 | 6105 | 84.6 | 77.3 | 62.1 | 32.5 | 45.9 | 27.4 | 24.6 | 19.5 | 13.8 | 22.3 |
| Արմավիր | 4060 | 4010 | 4218 | 5846 | 7169 | 123.2 | 58.1 | 52.3 | 35.3 | 20.7 | 46.7 | 22.1 | 17.5 | 10.8 | 10.8 |
| Գեղարքունիք | 1168 | 1168 | 1210 | 1168 | 1402 | 31.0 | 37.3 | 63.1 | 94.0 | 79.0 | 3.6 | 4.4 | 7.6 | 11.0 | 10.2 |
| Լոռի | 1528 | 1567 | 1698 | 1011 | 2475 | 41.9 | 18.6 | 7.9 | 64.3 | 5.5 | 5.6 | 2.4 | 1.2 | 6.5 | 1.1 |
| Կոտայք | 3348 | 3053 | 3010 | 3445 | 4088 | 25.8 | 40.1 | 42.4 | 55.5 | 54.9 | 8.7 | 12.2 | 12.5 | 18.3 | 19.8 |
| Շիրակ | 202 | 215 | 316 | 319 | 438 | 32.4 | 33.0 | 35.2 | 37.3 | 59.1 | 0.6 | 0.7 | 1.0 | 1.0 | 2.6 |
| Սյունիք | 2292 | 2338 | 2608 | 2517 | 2695 | 41.2 | 17.0 | 12.0 | 13.5 | 1.1 | 9.3 | 3.9 | 3.1 | 3.2 | 0.3 |
| Վայոց ձոր | 1106 | 1106 | 1158 | 1226 | 1880 | 47.0 | 46.3 | 17.1 | 16.2 | 17.4 | 5.2 | 4.8 | 1.9 | 1.9 | 2.9 |
| Տավուշ | 1043 | 1065 | 1069 | 1032 | 2081 | 23.8 | 14.7 | 7.6 | 61.0 | 16.2 | 2.5 | 1.6 | 0.7 | 5.9 | 2.7 |

Աղյուսակ 3.8.

Խաղողի տարածությունները, միջին բերքատվությունը և համախառն բերքը *

| | Տարածությունները (հա) | | | | | Բերքատվությունը (ց/հա)** | | | | | Համախառն բերքը (հազ.տոննա) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
| **ՀՀ ընդամենը** | **15027** | **14843** | **12997** | **13054** | **14856** | **78.0** | **81.4** | **82.8** | **71.4** | **108.9** | **115.8** | **116.5** | **104.0** | **81.6** | **148.9** |
| ք. Երևան | 618 | 618 | 506 | 556 | 637 | 63.0 | 49.1 | 43.5 | 17.6 | 46.0 | 3.9 | 3.0 | 2.2 | 0.9 | 2.9 |
| Արագածոտն | 2298 | 2403 | 1336 | 1479 | 1846 | 26.7 | 21.2 | 40.2 | 9.5 | 38.3 | 6.1 | 5.1 | 5.3 | 1.4 | 7.0 |
| Արարատ | 3715 | 3856 | 3630 | 3407 | 4065 | 132.0 | 116.8 | 118.5 | 146.8 | 157.7 | 45.8 | 39.9 | 40.0 | 45.1 | 56.2 |
| Արմավիր | 5698 | 5342 | 4943 | 5123 | 5386 | 84.6 | 106.6 | 110.7 | 62.6 | 146.3 | 47.9 | 56.1 | 53.3 | 24.0 | 71.2 |
| Գեղարքունիք | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Լոռի | 69 | 69 | 68 | 66 | 65 | 37.5 | 38.1 | 8.0 | 52.6 | 10.0 | 0.3 | 0.3 | 0.1 | 0.3 | 0.0 |
| Կոտայք | 676 | 626 | 533 | 496 | 494 | 15.0 | 11.5 | 6.7 | 3.6 | 20.4 | 1.0 | 0.7 | 0.4 | 0.2 | 1.0 |
| Շիրակ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Սյունիք | 128 | 98 | 123 | 117 | 185 | 41.3 | 76.8 | 39.1 | 34.7 | 13.5 | 0.5 | 0.7 | 0.5 | 0.4 | 0.3 |
| Վայոց ձոր | 556 | 582 | 675 | 577 | 849 | 71.9 | 46.7 | 17.2 | 14.0 | 46.1 | 4.0 | 2.7 | 1.0 | 0.8 | 3.2 |
| Տավուշ | 1269 | 1249 | 1183 | 1233 | 1329 | 49.9 | 63.9 | 10.1 | 68.7 | 53.6 | 6.3 | 8.0 | 1.2 | 8.5 | 7.1 |

Աղյուսակ 3.9.

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ*

*գլուխ*

| | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|
| **ՀՀ ընդամենը** | **497306** | **514244** | **535784** | **565844** | **573260** |
| ք. Երևան | 2447 | 2380 | 2590 | 2588 | 3353 |
| Արագածոտն | 55656 | 56800 | 63207 | 66502 | 67612 |
| Արարատ | 37376 | 42683 | 42741 | 45656 | 43102 |
| Արմավիր | 37367 | 35244 | 37145 | 39311 | 40728 |
| Գեղարքունիք | 87728 | 95419 | 96002 | 104018 | 100776 |
| Լոռի | 56269 | 56034 | 59380 | 64102 | 65967 |
| Կոտայք | 47664 | 48318 | 51555 | 53763 | 55759 |
| Շիրակ | 71428 | 77687 | 79908 | 84344 | 88982 |
| Սյունիք | 42892 | 42046 | 45790 | 49509 | 49889 |
| Վայոց ձոր | 21315 | 20403 | 19900 | 20418 | 20895 |
| Տավուշ | 37164 | 37230 | 37566 | 35633 | 36197 |

Աղյուսակ 3.10.

## Կովերի գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ*

*գլուխ*

| | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|
| **ՀՀ ընդամենը** | **264920** | **270107** | **280764** | **290995** | **290069** |
| ք.Երևան | 1526 | 1306 | 1435 | 1658 | 2084 |
| Արագածոտն | 30578 | 30597 | 32508 | 35251 | 34879 |
| Արարատ | 18513 | 21023 | 21028 | 21524 | 19826 |
| Արմավիր | 19050 | 17441 | 18378 | 18450 | 18239 |
| Գեղարքունիք | 45472 | 49613 | 49893 | 52775 | 51291 |
| Լոռի | 31415 | 31813 | 33208 | 35131 | 34759 |
| Կոտայք | 27993 | 26601 | 28314 | 28932 | 28985 |
| Շիրակ | 37599 | 38545 | 41875 | 43368 | 45916 |
| Սյունիք | 22771 | 23059 | 23848 | 25129 | 25270 |
| Վայոց ձոր | 10553 | 10630 | 10795 | 10281 | 10129 |
| Տավուշ | 19450 | 19479 | 19482 | 18496 | 18691 |

Աղյուսակ 3.11.

## Խոզերի գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ*

*գլուխ*

| | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|
| **ՀՀ ընդամենը** | **68912** | **97884** | **111031** | **85393** | **89082** |
| ք. Երևան | 2243 | 2993 | 1862 | 2094 | 2342 |
| Արագածոտն | 3644 | 5830 | 6026 | 4048 | 3765 |
| Արարատ | 5343 | 9430 | 9244 | 9021 | 8733 |
| Արմավիր | 8569 | 11092 | 9661 | 9289 | 9490 |
| Գեղարքունիք | 4635 | 7299 | 7467 | 6512 | 6005 |
| Լոռի | 10551 | 13813 | 17044 | 10398 | 10750 |
| Կոտայք | 4989 | 8984 | 12320 | 9828 | 11389 |
| Շիրակ | 7141 | 13728 | 19846 | 11042 | 11857 |
| Սյունիք | 3711 | 4244 | 4225 | 4202 | 4450 |
| Վայոց ձոր | 685 | 961 | 1240 | 570 | 782 |
| Տավուշ | 17401 | 19510 | 22096 | 18389 | 19519 |

Աղյուսակ 3.12.

Ոչխարների և այծերի գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ*

*գլուխ*

| | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|
| ՀՀ ընդամենը | 539992 | 592086 | 602560 | 628475 | 603252 |
| ք. Երևան | 2691 | 3085 | 3898 | 3900 | 3408 |
| Արագածոտն | 77130 | 86476 | 87067 | 90122 | 87587 |
| Արարատ | 61985 | 73426 | 76653 | 83621 | 76554 |
| Արմավիր | 41628 | 39119 | 39784 | 44807 | 49724 |
| Գեղարքունիք | 94569 | 99802 | 100739 | 105178 | 99719 |
| Լոռի | 36507 | 39069 | 40077 | 43388 | 41535 |
| Կոտայք | 50968 | 61959 | 64514 | 64450 | 59893 |
| Շիրակ | 55558 | 67287 | 67355 | 74373 | 72604 |
| Սյունիք | 55548 | 57088 | 60785 | 62991 | 60786 |
| Վայոց ձոր | 30243 | 31553 | 30154 | 29073 | 26765 |
| Տավուշ | 33165 | 33222 | 31534 | 26572 | 24677 |

Աղյուսակ 3.13.

Կենդանական ծագման գյուղատնտեսական մթերքի արտադրությունն ըստ մարզերի

| | Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով հազ. տոննա[1]) | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | |
| | | | | | | I եռամսյակ | II եռամսյակ |
| **ՀՀ ընդամենը** | **88.8** | **86.8** | **89.0** | **92.0** | **94.6** | **17.7** | **20.4** |
| ք. Երևան | 0.8 | 0.7 | 1.7 | 1.4 | 0.4 | 0.1 | 0.1 |
| Արագածոտն | 10.7 | 10.3 | 9.1 | 9.5 | 10.3 | 1.9 | 2.2 |
| Արարատ | 6.1 | 6.1 | 7.3 | 8.0 | 8.4 | 1.6 | 1.7 |
| Արմավիր | 6.2 | 6.1 | 7.9 | 8.4 | 10.0 | 2.2 | 2.4 |
| Գեղարքունիք | 14.4 | 14.3 | 14.3 | 14.4 | 14.9 | 2.7 | 3.2 |
| Լոռի | 10.8 | 10.6 | 8.5 | 9.0 | 9.5 | 1.7 | 2.1 |
| Կոտայք | 7.3 | 7.8 | 10.9 | 11.0 | 9.8 | 1.8 | 2.1 |
| Շիրակ | 12.0 | 11.6 | 13.2 | 13.4 | 13.1 | 2.4 | 2.8 |
| Սյունիք | 8.0 | 7.7 | 6.6 | 7.0 | 7.7 | 1.4 | 1.6 |
| Վայոց ձոր | 4.6 | 4.3 | 3.2 | 3.3 | 3.3 | 0.6 | 0.7 |
| Տավուշ | 7.9 | 7.3 | 6.3 | 6.6 | 7.2 | 1.3 | 1.5 |
| | Կաթ (հազ. տոննա) | | | | | | |
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | |
| | | | | | | I եռամսյակ | II եռամսյակ |
| **ՀՀ ընդամենը** | **452.1** | **465.3** | **489.5** | **513.7** | **555.2** | **77.3** | **225.4** |
| ք. Երևան | 3.3 | 3.3 | 3.1 | 3.4 | 3.6 | 0.6 | 1.3 |
| Արագածոտն | 55.0 | 56.3 | 55.3 | 59.4 | 64.1 | 8.9 | 26.0 |
| Արարատ | 30.5 | 32.0 | 38.1 | 38.4 | 41.4 | 5.8 | 16.8 |
| Արմավիր | 30.3 | 32.2 | 31.1 | 33.2 | 35.9 | 5.0 | 14.6 |
| Գեղարքունիք | 78.6 | 80.0 | 89.9 | 91.5 | 98.7 | 13.8 | 40.0 |
| Լոռի | 55.1 | 56.3 | 54.6 | 60.4 | 65.4 | 9.1 | 26.4 |
| Կոտայք | 42.0 | 43.3 | 48.9 | 52.8 | 56.9 | 7.9 | 23.3 |
| Շիրակ | 61.9 | 63.3 | 72.6 | 76.6 | 83.0 | 11.5 | 33.8 |
| Սյունիք | 39.8 | 40.9 | 41.9 | 43.4 | 47.1 | 6.5 | 19.2 |
| Վայոց ձոր | 21.3 | 22.3 | 19.0 | 19.4 | 21.0 | 2.9 | 8.5 |
| Տավուշ | 34.3 | 35.4 | 35.0 | 35.2 | 38.1 | 5.3 | 15.5 |
| | Ձու (մլն. հատ) | | | | | | |
| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | |
| | | | | | | I եռամսյակ | II եռամսյակ |
| **ՀՀ ընդամենը** | **385.4** | **448.3** | **477.7** | **502.2** | **563.0** | **109.2** | **153.6** |
| ք. Երևան | 35.5 | 38.3 | 52.3 | 55.5 | 46.9 | 11.8 | 10.1 |
| Արագածոտն | 26.8 | 21.2 | 22.5 | 26.2 | 27.3 | 4.2 | 8.7 |
| Արարատ | 24.5 | 30.3 | 31.7 | 38.8 | 41.4 | 6.6 | 13.7 |
| Արմավիր | 42.5 | 35.4 | 32.3 | 37.4 | 39.9 | 6.6 | 12.8 |
| Գեղարքունիք | 21.6 | 32.3 | 30.7 | 35.2 | 41.0 | 6.7 | 13.8 |
| Լոռի | 17.5 | 16.8 | 17.1 | 23.0 | 29.2 | 4.4 | 8.4 |
| Կոտայք | 116.0 | 198.6 | 211 | 200.6 | 251.6 | 54.5 | 57.6 |
| Շիրակ | 31.4 | 30.1 | 32.5 | 35.2 | 38.1 | 6.2 | 12.9 |
| Սյունիք | 23.1 | 14.2 | 13.7 | 15.1 | 14.6 | 2.4 | 4.9 |
| Վայոց ձոր | 22.5 | 8.9 | 10.5 | 11.6 | 12.5 | 2.5 | 3.7 |
| Տավուշ | 24.0 | 22.2 | 23.4 | 23.6 | 20.5 | 3.3 | 7.0 |

[1] *Ներառյալ ներքին սպառումը*

## Ագրոօդերևութաբանական տեղեկատվություն
## (2005թ. ապրիլ- հունիս)

Ապրիլին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության տարածքի գերակշիռ մասում նորմայից բարձր էր 1-2 աստիճանով: Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում գրանցված առավելագույն ջերմաստիճան +30…+33 էր, Տավուշում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում` +27…+29, իսկ լեռնային շրջաններում` +22...+26: Դրա հետ մեկտեղ լեռնային շրջաններում և Լոռիում օդի նվազագույն ջերմաստիճան հասավ -10…-15, Աշոցքում` -17, Սյունիքում` -2…-7, Արարատյան դաշտում, Տավուշում -1…-3 աստիճան: Ամսական տեղումների քանակը շրջանների մեծ մասում բարձր էր նորմայից և կազմեց նորմայի 110-150%-ը, միայն Գեղարքունիքում և Սյունիքում այն ցածր էր նորմայից (Գեղարքունիքում` 65-90%, Սյունիքում` 25-55%, Սիսիանում` 90%) :

Ապրիլին եղանակային պայմանները նպաստավոր էին ինչպես պտղատու այգիների փոշոտման, բողբոջման և ծաղկման, այնպես էլ աշնանացան մշակաբույսերի վեգետացիայի և թփակալման համար: Ամսվա եղանակային պայմանները բարենպաստ էին նաև գյուղատնտեսական աշխատանքների համար` բացառությամբ առանձին օրերի, երբ գրանցված ցածր ջերմաստիճանները և տեղումները (որոշ լեռնային շրջաններում ձյան տեսքով) դժվարեցրին դրանց կատարումը:

Մայիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը նորմայի սահմաններում էր: Օդի առավելագույն բարձր ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում հասավ +27...+32, Լոռիում, Սյունիքի նախալեռներում և Տավուշում` +23…+26, լեռնային շրջաններում` +18…+22 աստիճան: Նվազագույն ջերմաստիճանը գրանցվեց Լոռիում և առանձին լեռնային շրջաններում (0…-4) : Տավուշում այն հասավ 0…+6, Սյունիքի նախալեռներում` +2…+6, Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում` +5…+8 աստիճան: Ամսական տեղումների քանակը նորմայից ավել էր, Սյունիքում այն կազմեց նորմայի 120-160%-ը, Վայոց Ձորում, Արարատյան դաշտում և նրա նախալեռներում 110-140%, Շիրակում, Տավուշում, Լոռիում, Գեղարքունիքում, Կոտայքում և Արագածոտնում 100-120%: Դա իր բացասական ազդեցությունն ունեցավ հանրապետությունում շարունակվող գյուղատնտեսական աշխատանքների վրա և իջեցրեց պրոֆիլակտիկ միջոցառումների արդյունավետությունը:

Մայիսին եղանակային պայմանները հիմնականում բարենպաստ էին բազմամյա մշակաբույսերի համար, բացառությամբ Արմավիրի մարզի առանձին գյուղերի, որտեղ դիտված կարկուտը վնաս պատճառեց պտղատուներին և խաղողին:

Հունիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը նորմայի սահմաններում էր: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվեց Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում (+34..+36): Տավուշում, Լոռիում, լեռնային շրջաններում և Սյունիքի նախալեռներում այն հասավ +26…+28 աստիճան: Լեռնային շրջաններում գրանցված նվազագույն ջերմաստիճանը -2…+4 էր, Լոռիում` +1…+5, Տավուշում, Սյունիքի նախալեռներում` +6…+11, Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում` +9…+10 աստիճան: Ամսական տեղումների քանակը հանրապետության գերակշիռ մասում գերազանցեց ամսական նորման և կազմեց 100-150% (Արտաշատում 220%), իսկ առանձին շրջաններում դիտվեց կարկուտ: Փոխարենը Սյունիքում, Վայոց Ձորում ամսական տեղումների քանակը պակաս էր նորմայից և կազմեց նորմայի 48-75%-ը:

Ամսվա եղանակային պայմանները ոչ միշտ էին նպաստավոր գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար, պայմանավորված հաճախակի դիտվող տեղումներով և ուժեղ քամու առկայությամբ: Հովտային շրջաններում սկսվեց կորիզավոր պտղատուների բերքահավաքը: Ջերմային պայմանները նպաստավոր էին պտղատուների մոտ շաքարային նյութերի կուտակման համար:

Աղյուսակ 3.14.

## Պարենամթերքի ներմուծում

*տոննա*

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | I եռամսյակ | II եռամսյակ |
| Ցորեն | 375220.8 | 295877.6 | 326784.8 | 303946.8 | 384607.9 | 74500.9 | 62729.7 |
| Ալյուր | 36156.8 | 24663.6 | 14180.9 | 6096.7 | 14596.9◊ | 735.4 | 301.1 |
| Բրինձ | 11843.3 | 11078 | 14310.6 | 15685.7 | 14494.8◊ | 2565.4 | 3631.0 |
| Մակարոնեղեն | 7789.3 | 1494.8 | 1255.3 | 2021.6 | 2835.5◊ | 629.1 | 852.2 |
| Շաքար | 69422.6 | 73485.8 | 68400.2 | 86963.1 | 74875. 5◊ | 15310.4 | 33654.2 |
| Բուսական յուղ | 11648.5 | 13050.2 | 12152.8 | 18309.3 | 13220.4◊ | 4631.3 | 3802.6 |
| Ձու | 1899.2 | 529 | 88.8 | 8.6 | 44.7 | 17.5 | 16.800 |
| Թռչնի միս | 13893.5 | 13043.4 | 11897.8 | 12377.9 | 10019.2◊ | 2557.2 | 3777.6 |
| Տավարի միս | 6560.3 | 7319.4 | 7789.5 | 9658.4 | 10863.2 | 2864.5 | 1731.7 |
| Խոզի միս | 844.3 | 596.8 | 705.4 | 964.5 | 2134.9 | 430.3 | 750.1 |
| Կաթ (բոլոր տեսակները) | 1886.1 | 1467.3 | 2077.9 | 3575.9 | 3866.5◊ | 365.8 | 1123.2 |
| Կարագ | 3778.5 | 3829.8 | 3303.4 | 3644.6 | 5268.4◊ | 698.6 | 1165.9 |
| Պանիր | 190.6 | 158.6 | 180.2 | 253.5 | 493.5◊ | 119.8 | 112.2 |
| Բանջարեղեն | 3976.2 | 7511.4 | 7121.1 | 8669.1 | 9004.3◊ | 2219.4 | 2969.2 |
| *որից*՝ կարտոֆիլ | 390.0 | 2289,6 | 1927.0 | 2858.7 | 1553.3 | - | 915.1 |
| Միրգ (ներառյալ ընկուզապտուղներ) | 7520.1 | 8436.6 | 9193.7 | 12584.5 | 17167.9◊ | 5550.3 | 3458.1 |
| *որից*՝ խաղող | 851.1 | 1023.9 | 930.1 | 1256.2 | 894.5◊ | 22.0 | 43.9 |
| բոստանային մշակաբույսեր | 221.0 | 171.3 | 225.7 | 267.2 | 313.6◊ | 0.0 | 7.7 |

Աղյուսակ 3.15.

## Պարենամթերքի արտահանում

*տոննա*

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | I եռամսյակ | II եռամսյակ |
| Կոնյակ[1] | 4072.5 | 7367.2 | 10024.0 | 12118 | 10824.0◊ | 3016.9 | 4252.0 |
| Գինի | 487 | 1581.4 | 605.6 | 362.3 | 382.6◊ | 45.0 | 149.8 |
| Հանքային ջուր | 917.3 | 2124.3 | 2339.5 | 3816.1 | 4520.1◊ | 1374.0 | 1559.8 |
| Միրգ (ներառյալ ընկուզապտուղներ) | 5005.3 | 981.9 | 3307.9 | 3978.0 | 2497.2◊ | 12.0 | 1327.9 |
| որից՝խաղող | 1288 | 873.8 | 560.9 | 1003.7 | 324.8◊ | - | - |
| Պանիր | 0.1 | 41.1 | 96.2 | 1002.6 | 1026.3◊ | 327.1 | 439.1 |
| Ձու | 155.1 | 711.6 | 781.4 | 1196.9 | 2703.2 | 274.3 | 301.4 |

Աղյուսակ 3.16

## Մարդասիրական օգնություն

*տոննա*

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | I եռամսյակ | II եռամսյակ |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 837 | 36.7 | 14.3 | 98.7 | 10.6 | 0.0 | 0.0 |
| Բուսական ծագման արտադրանք | 66196 | 43327.6 | 2379.8 | 443.3 | 5392.7 | 473.7 | 15.6 |
| Կենդանական և բուսական ծագման յուղեր ու ճարպեր | 2019 | 181.7 | 2.4 | 1.5 | 4.8 | 3.9 | 0.0 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 1409 | 526.9 | 56.2 | 166.0 | 136.5 | 4.2 | 5.1 |

[1] *Մինչև 2004թ. տվյալները ներկայացված են առանց քաղաքացիների կողմից իրականացվող առևտրի:*

Աղյուսակ 3.17.

## Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2002թ

*հազ.տոննա*

| | Պահուստներ տարվա սկզբում | Արտադրություն | Ներմուծում[1] | **Ամբողջական առաջարկ** | Սննդի օգտագործում | Անասնակեր | Կորուստներ | Սերմացու | Արտահանում[1] | Այլ օգտագործում | Պահուստներ տարվա վերջում | **Օգտագործում** | Ինքնաբավության աստիճան, % | Սպառումը մեկ շնչի հաշվով | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | կգ/տարի | գր/օր | կկալ/օր |
| Ցորեն | 54.0 | 284.7 | 347.7 | **686.4** | 453.9 | 80.4 | 10.3 | 36.0 | 2.1 | 0.0 | 103.7 | **686.4** | 45.2 | 151.2 | 414.2 | 1325.6 |
| Կարտոֆիլ[◊] | 272.3 | 374.3 | 1.9 | **648.5** | 135.0 | 68.0 | 36.6 | 121.9 | 0.0 | 0.0 | 287.0 | **648.5** | 99.5 | 45.0 | 123.2 | 92.4 |
| Բանջարեղեն[◊] | 185.7 | 713.7 | 7.1 | **906.5** | 559.7 | 11.3 | 14.7 | 0.7 | 22.5 | 0.0 | 297.6 | **906.5** | 102.2 | 186.4 | 510.8 | 154.3 |
| Միրգ (բացի խաղողից) | 6.0 | 82.6 | 9.4 | **98.0** | 79.9 | 0.0 | 7.8 | - | 4.7 | 0.0 | 5.6 | **98.0** | 94.6 | 26.6 | 72.9 | 109.4 |
| Հատիկաընդեղային մշակաբույսեր | 0.8 | 3.5 | 4.0 | **8.3** | 6.9 | 0.0 | 0.4 | 0.2 | 0.0 | 0.0 | 0.8 | **8.3** | 46.7 | 2.3 | 6.3 | 18.2 |
| Բուսական յուղ | 1.1 | 1.2 | 12.4 | **14.7** | 13.4 | - | 0.2 | - | 0.0 | 0.0 | 1.1 | **14.7** | 8.8 | 4.5 | 12.2 | 80.7 |
| Շաքար | 3.2 | 0.0 | 69.9 | **73.1** | 68.4 | - | 1.1 | - | 0.6 | 0.0 | 3.0 | **73.1** | 0.0 | 22.8 | 62.4 | 241.0 |
| Ձու | 0.3 | 26.3 | 0.1 | **26.7** | 23.3 | 0.0 | 1.4 | 0.9 | 0.8 | 0.0 | 0.3 | **26.7** | 102.7 | 7.7 | 21.3 | 11.3 |
| Կաթ (բացի կարագից) | 45.9 | 489.5 | 10.6 | **546.0** | 434.4 | 49.0 | 21.8 | - | 0.8 | 0.0 | 40.0 | **546.0** | 98.0 | 144.7 | 396.4 | 158.6 |
| Տավարի միս | 0.8 | 29.6 | 8.8 | **39.2** | 37.8 | 0.0 | 0.5 | - | 0.1 | 0.0 | 0.8 | **39.2** | 77.3 | 12.6 | 34.5 | 62.1 |
| Խոզի միս | 0.2 | 10.3 | 3.8 | **14.3** | 13.8 | 0.0 | 0.2 | - | 0.0 | 0.0 | 0.3 | **14.3** | 73.1 | 4.6 | 12.6 | 26.4 |
| Ոչխարի և այծի միս | 0.1 | 5.9 | 0.0 | **6.0** | 5.8 | 0.0 | 0.1 | - | 0.0 | 0.0 | 0.1 | **6.0** | 100.0 | 1.9 | 5.3 | 8.5 |
| Հավի միս | 0.4 | 4.4 | 12.8 | **17.6** | 17.1 | 0.0 | 0.1 | - | 0.0 | 0.0 | 0.4 | **17.6** | 25.6 | 5.7 | 15.6 | 16.7 |
| Խաղող | 2.2 | 104.0 | 3.6 | **109.8** | 101.5 | 0.0 | 5.0 | - | 0.6 | 0.0 | 2.7 | **109.8** | 97.2 | 2.3 | 6.3 | 4.2 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | | | | | | | | | | | *2309.4*[◊] |

Այստեղ և հետայսու պարենային հաշվեկշիռներում`

-*ցորենի* ցուցանիշը ներառում է ցորենի, ինչպես նաև ալյուրի, մակարոնեղենի, էթիլային սպիրտի և այլ հացամթերքի տվյալները պայմանականորեն վերածած ցորենի,

-*բանջարեղենի* ցուցանիշը ներառում է թարմ, չորացված և պահածոյացված բանջարեղենի (կաղամբ բոլոր տեսակի, վարունգ, լոլիկ, սեղանի ճակնդեղ, գլուխ սոխ, սխտոր և այլն) տվյալները,

-*մրգի* ցուցանիշը ներառում է թարմ, չորացրած և պահածոյացված մրգի (հնդավորներ, կորիզավորներ, մերձարևադարձային, արևադարձային և այլն) տվյալները,

-*հատիկաընդեղային մշակաբույսերի* ցուցանիշը ներառում է լոբու, ոսպի և այլ լոբազգիների տվյալները,

-*բուսական յուղի* ցուցանիշը ներառում է սոյայի, գետնընկույզի, ձիթապտղի, արմավենու, արևածաղկի և այլ ձեթերի տվյալները,

-*ձվի* ցուցանիշը ներառում է կճեպով ձվի, ինչպես նաև ձվի փոշու տվյալները պայմանականորեն վերածած ձվի,

-*կաթի* ցուցանիշը ներառում է թարմ կաթի, ինչպես նաև կաթի փոշու, մածունի, թթվասերի, կաթնաշոռի, պանրի և այլ կաթնամթերքի տվյալները պայմանականորեն վերածած թարմ կաթի,

-*տավարի, խոզի, ոչխարի և այծի, հավի մսի* ցուցանիշները ներառում են սպանդային քաշով մսի, ինչպես նաև երշիկեղենի, պահածոյացված մսի և այլ մսամթերքի տվյալները պայմանականորեն վերածած սպանդային քաշով մսի,

-*խաղողի* ցուցանիշը ներառում է խաղողի, ինչպես նաև չամիչի տվյալները պայմանականորեն վերածած խաղողի:

[1] *Առանց «ՀՀ Մաքսային օրենսգրքով» թույլատրելի չափաքանակների հաշվառման:*

Աղյուսակ 3.18.

## Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2003թ.

*հազ.տոննա*

| | Պահուստներ տարվա սկզբում | Արտադրություն | Ներմուծում[1] | **Ամբողջական առաջարկ** | Սննդի օգտագործում | Անասնակեր | Կորուստներ | Սերմացու | Արտահանում[1] | Այլ օգտագործում | Պահուստներ տարվա վերջում | **Օգտագործում** | Ինքնաբավության աստիճան, % | Սպառումը մեկ շնչի հաշվով | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | կգ/տարի | գր/օր | կկալ/օր |
| Ցորեն | 103.7 | 216.7 | 316.3 | **636.7** | 469.9 | 80.8 | 9.6 | 38.2 | 0.3 | 0.0 | 37.9 | **636.7** | 40.7 | 156.5 | 428.8 | 1372.3 |
| Կարտոֆիլ◊ | 287.0 | 507.5 | 2.9 | **797.4** | 144.5 | 70.2 | 45.1 | 129.1 | 0.0 | 0.0 | 408.5 | **797.4** | 99.4 | 48.1 | 131.9 | 98.9 |
| Բանջարեղեն◊ | 297.6 | 684.8 | 11.9 | **994.3** | 668.6 | 13.3 | 17.9 | 0.8 | 28.7 | 0.0 | 265.0 | **994.3** | 102.5 | 222.7 | 610.2 | 159.3 |
| Միրգ (բացի խաղողից) | 5.6 | 103.1 | 14.0 | **122.7** | 100.5 | 0.0 | 9.4 | - | 7.4 | 0.0 | 5.4 | **122.7** | 94.0 | 33.4 | 91.7 | 134.0 |
| Հատիկաընդեղային մշակաբույսեր | 0.8 | 4.7 | 3.1 | **8.6** | 7.1 | 0.0 | 0.4 | 0.2 | 0.0 | 0.0 | 0.9 | **8.6** | 60.2 | 2.3 | 6.4 | 11.2 |
| Բուսական յուղ | 1.1 | 2.1 | 18.6 | **21.8** | 19.4 | - | 0.3 | - | 0.4 | 0.0 | 1.7 | **21.8** | 10.3 | 6.5 | 17.7 | 116.8 |
| Շաքար◊ | 3.0 | 0.0 | 89.3 | 92.3 | 86.3 | - | 1.4 | - | 0.8 | 0.0 | 3.8 | **92.3** | 0.0 | 28.7 | 78.7 | 304.0 |
| Ձու | 0.3 | 27.6 | 0.1 | **28.0** | 24.2 | 0.0 | 1.4 | 0.9 | 1.2 | 0.0 | 0.3 | **28.0** | 104.2 | 8.1 | 22.1 | 11.7 |
| Կաթ (բացի կարագից) | 40.0 | 513.7 | 16.7 | **570.4** | 453.6 | 51.4 | 22.8 | - | 8.5 | 0.0 | 34.1 | **570.4** | 98.4 | 151.1 | 414.0 | 165.6 |
| Տավարի միս | 0.8 | 29.9 | 10.4 | **41.1** | 39.2 | 0.0 | 0.5 | - | 0.7 | 0.0 | 0.7 | **41.1** | 75.5 | 13.1 | 35.8 | 64.4 |
| Խոզի միս | 0.3 | 11.5 | 6.2 | **18.0** | 17.4 | 0.0 | 0.2 | - | 0.1 | 0.0 | 0.3 | **18.0** | 65.3 | 5.8 | 16.0 | 33.4 |
| Ոչխարի և այծի միս | 0.1 | 6.2 | 0.0 | **6.3** | 6.1 | 0.0 | 0.1 | - | 0.0 | 0.0 | 0.1 | **6.3** | 100.0 | 2.0 | 5.6 | 8.9 |
| Հավի միս | 0.4 | 5.0 | 13.0 | **18.4** | 17.9 | 0.0 | 0.1 | - | 0.1 | 0.0 | 0.3 | **18.4** | 27.9 | 6.0 | 16.3 | 17.5 |
| Խաղող | 4.7 | 81.6 | 4.8 | **91.1** | 83.0 | 0.0 | 4.1 | - | 1.0 | 0.0 | 3.0 | **91.1** | 95.5 | 2.5 | 6.8 | 4.6 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | | | | | | *2502.6*◊ |

[1] *Առանց «ՀՀ Մաքսային օրենսգրքով» թույլատրելի չափաքանակների հաշվառման:*

Աղյուսակ 3.19.

## Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2004թ

*հազ.տոննա*

| | Պահուստներ տարվա սկզբում | Արտադրություն | Ներմուծում[1] | **Ամբողջական առաջարկ** | Սննդի օգտագործում | Անասնակեր | Կորուստներ | Սերմացու | Արտահանում[1] | Այլ օգտագործում | Պահուստներ տարվա վերջում | **Օգտագործում** | Ինքնաբավության աստիճան, % | Սպառումը մեկ շնչի հաշվով | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | կգ/տարի | գր/օր | կկալ/օր |
| Ցորեն | 37.9 | 291.6 | 410.3 | **739.8** | 508.8 | 95.9 | 11.7 | 38.5 | 0.9 | 0.0 | 84.0 | **739.8** | 41.6 | 169.5 | 464.3 | 1485.9 |
| Կարտոֆիլ◊ | 408.5 | 576.4 | 1.6 | **986.5** | 179.3 | 144.3 | 65.2 | 142.9 | 0.0 | 0.0 | 454.8 | **986.5** | 99.7 | 59.7 | 163.6 | 122.7 |
| Բանջարեղեն◊ | 265.0 | 713.6 | 12.5 | **991.1** | 648.4 | 14.3 | 18.7 | 0.8 | 28.0 | 0.0 | 280.9 | **991.1** | 102.2 | 216.0 | 591.8 | 174.8 |
| Միրգ (բացի խաղողից) | 5.4 | 113.7 | 22.8 | **141.9** | 116.3 | 0.0 | 10.5 | - | 5.0 | 0.0 | 10.1 | **141.9** | 86.5 | 38.7 | 106.1 | 131.4 |
| Հատիկաընդեղային մշակաբույսեր | 0.9 | 5.2 | 3.0 | **9.1** | 7.6 | 0.0 | 0.4 | 0.2 | 0.0 | 0.0 | 0.9 | **9.1** | 63.4 | 2.5 | 6.9 | 21.9 |
| Բուսական յուղ | 1.7 | 0.4 | 13.7 | **15.8** | 14.4 | - | 0.2 | - | 0.1 | 0.0 | 1.1 | **15.8** | 2.9 | 4.8 | 13.1 | 86.7 |
| Շաքար | 3.8 | 0.7 | 78.3 | **82.8** | 77.7 | - | 1.2 | - | 0.5 | 0.0 | 3.4 | **82.8** | 0.9 | 25.9 | 70.9 | 273.7 |
| Ձու | 0.3 | 31.0 | 0.3 | **31.6** | 25.8 | 0.0 | 1.6 | 1.1 | 2.7 | 0.0 | 0.4 | **31.6** | 108.4 | 8.6 | 23.5 | 12.5 |
| Կաթ (բացի կարագից) | 34.2 | 555.2 | 19.9 | **609.3** | 482.4 | 55.5 | 24.4 | - | 8.6 | 0.0 | 38.4 | **609.3** | 98.0 | 160.7 | 440.3 | 176.1 |
| Տավարի միս | 0.7 | 33.4 | 12.7 | **46.8** | 44.8 | 0.0 | 0.6 | - | 0.9 | 0.0 | 0.5 | **46.8** | 73.9 | 14.9 | 40.9 | 73.6 |
| Խոզի միս | 0.3 | 8.5 | 7.0 | **15.8** | 15.4 | 0.0 | 0.2 | - | 0.0 | 0.0 | 0.2 | **15.8** | 54.8 | 5.1 | 14.1 | 29.5 |
| Ոչխարի և այծի միս | 0.1 | 7.2 | 0.0 | **7.3** | 7.1 | 0.0 | 0.1 | - | 0.0 | 0.0 | 0.1 | **7.3** | 100.0 | 2.4 | 6.5 | 10.4 |
| Հավի միս | 0.3 | 4.3 | 13.4 | **18.0** | 17.7 | 0.0 | 0.1 | - | 0.0 | 0.0 | 0.2 | **18.0** | 24.3 | 5.9 | 16.2 | 17.3 |
| Խաղող | 3.0 | 148.9 | 3.4 | **155.3** | 141.2 | 0.0 | 7.0 | - | 0.3 | 0.0 | 6.8 | **155.3** | 98.0 | 2.7 | 7.5 | 5.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | | | | | | *2621.5*◊ |

[1] *Առանց «ՀՀ Մաքսային օրենսգրքով» թույլատրելի չափաքանակների հաշվառման:*

## Պարենային հաշվեկշիռների մեթոդաբանություն

Պատմականորեն պարենային հաշվեկշիռների նպատակը եղել և մնում է դիտարկվող պետությունում պարենի մատակարարումների, այն է՝ պարենի առկայության վերաբերյալ համապարփակ տեղեկատվության ներկայացումը: Պարենային հաշվեկշիռներ կազմելու անհրաժեշտությունն ակներև դարձավ Երկրորդ աշխարհամարտից հետո: Դա պայմանավորված էր պարենի արտադրության և մատակարարման ընդհատումներով: Պարենային ապահովության դերը համապատասխանորեն կարևորվում է նաև տնտեսական աճի տեսանկյունից: Պարենային հաշվեկշիռներն անհրաժեշտ են որոշակի ժամանակահատվածում երկրի պարենային ապահովության ամբողջական նկարագրության և պարենի անբավարար մատակարարման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

### *Պարենային հաշվեկշռի հատվածները*

***Ամբողջական առաջարկ***

Առաջարկը ներառում է արտադրության, ներմուծման և ժամանակաշրջանի սկզբի համար առկա պաշարների ցուցանիշները: Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում պաշարների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման առումով առկա են որոշակի տեխնիկական բարդություններ, այդ իսկ պատճառով պարենային հաշվեկշռում սովորաբար կիրառվում են այդ ցուցանիշի գնահատման որոշակի մոտեցումներ: Արտադրությունը սույն հատվածի կարևորագույն ցուցանիշն է, որը ներմուծման տվյալների հետ միասին հանդիսանում է ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալը:

***Պարենամթերքի օգտագործման ուղղություններ***

Սույն հատվածը ներառում է հետևյալ հիմնական ցուցանիշները՝ որպես սննդամթերքի օգտագործում, անասնակեր, վերարտադրում (սերմացու, ինկուբացիա և այլն), արտահանում, կորուստներ և օգտագործման այլ ուղղություններ, պաշարներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Վերջնական սպառման ցուցանիշը հանդիսանում է պարենային հաշվեկշռի առանցքային ցուցանիշներից մեկը, որը բնութագրում է տվյալ ապրանքատեսակի ներքին սպառման մակարդակը և հաշվարկվում է որպես ամբողջական առաջարկի և պարենամթերքի օգտագործման մյուս բոլոր ուղղությունների տարբերություն: Այն հանդես է գալիս որպես հաշվեկշռող ցուցանիշ:

Այլ տեսակի սննդամթերքի արտադրությանն ուղղվող որոշակի պարենամթերքի քանակը հաշվեկշռում հանդես է գալիս որպես մուտքային ցուցանիշ:

Սերմացու օգտագործվող ապրանքատեսակի քանակը հաշվարկվում է ցանքատարածությունների և ցանքի միջին ցուցանիշների հիման վրա:

Կորուստների ցուցանիշը հաշվարկվում է Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) առաջարկած գործակիցների միջոցով, որոնք որոշակի երկրի պայմաններից ելնելով կարող են ճշգրտվել:

Սույն հաշվեկշիռներում ներկայացված է նաև ինքնաբավության աստիճանի ցուցանիշը, որը հաշվարկվում է *Արտադրություն/(Արտադրություն+Ներմուծում-Արտահանում),* արտահայտված տոկոսներով, բանաձևով:

Պարենային հաշվեկշռում ընդգրկվող ապրանքատեսակների կազմը (ցանկը) պայմանավորված է տվյալ երկրում առավել լայն սպառում ունեցող ապրանքատեսակներով, այդ իսկ պատճառով փոքրածավալ սպառում ունեցող ապրանքատեսակների վերաբերյալ հաշվեկշիռներ չեն ներկայացվում:

Ցանքերի եզրափակիչ համատարած հաշվառման տվյալներով 2005թ. հունիսի 1-ի դրությամբ հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունները կազմել են 329.0 հազ. հեկտար, ինչը 10.7 հազ. հեկտարով ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Ընդ որում, 4.0 հազ հեկտարով ավելացել են հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի ցանքատարածությունները (210.0 հա հեկտար): Փոխարենը փոքրինչ նվազել են կարտոֆիլի (1.0 հազ. հեկտարով) և բանջարանոցային մշակաբույսերի (0.5 հազ. հեկտարով) ցանքատարածությունները և կազմել համապատասխանաբար 34.6 և 22.3 հազ հեկտար:

2005թ. հուլիսի 1-ի դրությամբ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը, բացառությամբ հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի, գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Այսպես՝ պտղի համախառն բերքն ավելացել է ավելի քան 30 անգամ և կազմել 36.5 հազ. տոննա, կարտոֆիլինը՝ մոտ 4.3 անգամ և 27.8 հազ. տոննա, բանջարեղենինը՝ մոտ 2.7 անգամ և 22.4 հազ. տոննա: Հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի համախառն բերքը նվազել է 57.1%-ով և կազմել 0.3 հազ տոննա:

2005թ. II եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կենդանական ծագման գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները, բացառությամբ ձվի, ավելացել են: Այսպես, 2005թ. II եռամսյակում իրացվել է 20.4 հազ. տոննա կենդանի քաշով միս, ինչը 7.4%-ով գերազանցում է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշը, իսկ կաթի արտադրության ծավալները ավելացել են 1.3 %-ով և կազմել 225.4 հազար տոննա: Ձվի արտադրության ծավալները նվազել են 14.6%-ով և կազմել 153.6 մլն. հատ:

Ըստ բեռնամաքսային հայտարարագրերի և քաղաքացիների կողմից կազմակերպված առևտրի տվյալների 2005թ. II եռամսյակում հանրապետություն ներմուծված ապրանքների 17.2%-ը բաժին է ընկել պարենամթերքին (2004թ. II եռամսյակում՝ 18.6%), իսկ արտահանման ծավալներում՝ 12.2% (2004թ. II եռամսյակում՝ 10.5%) (Աղյուսակ 1.1.): Հաշվետու ժամանակաշրջանում պարենամթերքի արտաքին առևտրաշրջանառության ծավալն ընթացիկ գներով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 19.6%-ով և կազմել 100.0 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում պարենամթերքի ներմուծումը՝ 71.5 մլն. ԱՄՆ դոլար (ՍԻՖ գներով) և արտահանումը՝ 28.5 մլն. ԱՄՆ դոլար (ՖՕԲ գներով):

2005թ. II եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ հիմնական պարենային ապրանքատեսակներից ալյուրի ներմուծման ծավալը նվազել է 23.8 անգամ և կազմել 0.3 հազ. տոննա, կարագինը՝ 41.0%-ով և կազմել 1.2 հազ. տոննա, պանրինը՝ 23.4%-ով և կազմել 0.1 հազ. տոննա, տավարի մսինը՝ 12.0%-ով և կազմել 1.7 հազ. տոննա: Փոխարենը ավելացել են շաքարի (2.1 անգամ), մրգի (75.9%-ով), թռչնի մսի (63.7%-ով), բուսական յուղի (47.8%-ով), ցորենի (30.3%-ով), կաթի (18.0%-ով), բրնձի (16.5%-ով), խոզի մսի (11.2%-ով), բանջարեղենի (10.6%-ով) ներմուծման ծավալները (Աղյուսակ 3.14.):

Պարենամթերքի արտահանման ծավալներում գերակշռում են կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր ապրանքային ենթախմբում ընդգրկված ալկոհոլային խմիչքները: Այսպես՝ 2005թ. II եռամսյակում արտահանվել է 4.2 հազ. տոննա կոնյակ, ինչը 66.7%-ով գերազանցում է 2004թ.-ի նույն ժամանակաշրջանի ցուցանիշը: Ավելացել են նաև մրգի (5.4 անգամ), պանրի (63.9%-ով), գինու (56.7%-ով), բնական, հանքային ջրերի (3.1%-ով) արտահանման ծավալները: Ձվի արտահանման ծավալները նվազել են 69.9 %-ով (Աղյուսակ 3.15.):

Ըստ ազգային պարենային հաշվեկշռի, միջինը մեկ շնչի հաշվով 14 ապրանքախմբի պարենի օրական էներգետիկ առաջարկը 2004թ. կազմել է 2626.5 կկալ՝ 2003թ. 2522.6-ի դիմաց (Աղյուսակներ 3.18 և 3.19.): Հետևաբար, ընդհանուր առմամբ հանրապետությունում առկա է բավարար քանակությամբ սնունդ, և պարենային ապահովության գնահատման այս համատեքստում առավել կարևորվում է պարենի մատչելիության հիմնահարցը՝ այդ թվում պարենի անհավասարաչափ բաշխումը:

Դա են վկայում նաև տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները: Այսպես՝ 2004թ մեկ շնչի հաշվով սպառվել է 1961 կկալ, իսկ ամենացածր և ամենաբարձր կալորիականությամբ սպառում ունեցող քվանտիլներում համապատասխանաբար 1293 և 3148 կկալ (Աղյուսակ 5.1.):

Երկրում պարենային ապահովության իրավիճակի գնահատման ընթացքում կարևորվում է նաև բնակչության կողմից սպառվող սննդի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեցող ապրանքների ինքնաբավությունը: Որքան բարձր է *ինքնաբավության աստիճանը*, այնքան ավելի ինքնաբավ է երկիրը և պահանջարկը բավարարում է սեփական միջոցների հաշվին:

Այսպես, 2004թ. ցորենի ինքնաբավության աստիճանը նախորդ տարվա համեմատ բարձրացել է 0.9 տոկոսային կետով և կազմել 41.6%, ինչը պայմանավորված է ցորենի արտադրության ծավալների զգալի ավելացմամբ (Աղյուսակ 3.19.): Արտադրության ծավալների կրճատումը հակառակ ազդեցություն է գործել բուսական յուղ ապրանքախմբի ինքնաբավության աստիճանի վրա (նվազել է 7.4 տոկոսային կետով և կազմել 2.9%): Շարունակում է ցածր մնալ նաև շաքար և հավի միս ապրանքախմբերի ինքնաբավության աստիճանը (համապատասխանաբար 0.9% և 24.3%): Մնացած պարենային ապրանքախմբերի (խոզի միս՝ 54.8%, հատիկաընդեղայիններ՝ 63.4%, տավարի միս՝ 73.9%, միրգ՝ 86.5%, կաթ՝ 98.0%, կարտոֆիլ՝ 99.7% և այլն) ինքնաբավության աստիճանը հատել է «ռուբիկոնը» կամ բավականին բարձր է: Բանջարեղեն և ձու պարենային ապրանքախմբերի հաշվեկշիռները վկայում են, որ պահպանվում է նշված ապրանքախմբերի արտահանման ծավալների ներմուծման ծավալները գերազանցելու միտումը, և ինքնաբավության աստիճանները կազմել են համապատասխանաբար 102.2 և 108.4%:

**Գծապատկեր 7. 2002-2004թթ. պարենային ապրանքների ինքնաբավության աստիճանների դինամիկան**

